ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 03 >> << Մայիսի >> 2019թ. N ՄՊ/161-2019

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ և 98-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2019 թվականի ապրիլի 15-ի N01/17.1/3408-19 գրությամբ տրված համաձայնությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքի բնակիչներ Վիրաբ Շահբազյանի և Զավեն Խաչատրյանի դիմումը.

որոշում եմ՝

1. Հաստատել 2019 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N1/32.1/727-16 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

5. Աշխատանքային խմբերի ղեկավարին (Գ. Հովհաննիսյան)՝ Արաշլույս համայնքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կարեն Գրիգորյանին:
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Invalid signature

X

VERIFIED OCSP 5/3/2019 18:55:49 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2019 թվականի մայիսի 03-ի
N ՄՊ/161-Ա որոշման

2019 թվականի երկրորդ եռամսյակի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	*Համայնքի անվանում*	*Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը*	*Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ*	*Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք*	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	*Անուն, ազգանուն*
1.	Արշալույս համայնք	10 աշխատանքային օր	1. Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական և պետության պատվիրակված լիազորությունների բնագավառ 2. Քաղաքաշինության բնագավառ 3. Հողօգտագործման բնագավառ	Աշխատանքային խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ. Աշխատանքային խմբի անդամներ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի բաժնի պետի պաշտոնակատար. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ.	Գ. Հովհաննիսյան Լ. Հարությունյան Հ. Էքիզյան

				Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ	Ա. Դարբինյան Ա. Դանիելյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 03.05.2019 17:56:33 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217